ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

27.03.2021թ.

2020թ. մարտ-մայիս ամիսներին ԵՊՀ Իջևանի մասաճյուղում բոլոր գործող կրթական ծրագրերը վերանայվել են՝ հիմք ունենալով ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հաստատված «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգը: Կրթական ծրագրերում առանձնացվել են մասնագիտական 5-ից 6 դասընթացներ, նրանք ամրագրվել են որպես հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացներ, ապա վերանայվել են այդ դասընթացների և, հետևաբար նաև կրթական ծրագրերի վերջնարդյունքները, գրականության ցանկը, կազմվել են կրթական ծրագրերի նոր մասնագրերը, իսկ այդ դասընթացները դասավանդող դասախոսները վերանայել են իրենց դասընթացների փաթեթները:

2020-2021 ուստարին մեկնարկել է վերանայված կրթական ծրագրերով և 4-րդից 7-րդ կիսամյակներում ուսանողներին հետազոտական աշխատանքներում լիարժեք ներգրավելու ակնկալիքներով:

2020-2021 ուստարվա առաջին կիսամյակում տարբեր կրթական ծրագրերով մասնաճյուղի 4 ֆակուլտետների 16 կուրսերում 26 մասնագիտական դասընթացների շրջանակներում իրականացվել են հետազոտական աշխատանքներ: Նման կազմակերպմամբ և տրամաբանությամբ աշխատանքներ մասնաճյուղում իրականացվել են առաջին անգամ, հետևաբար այդ աշխատրանքների իրականացման ընթացքում և՛ ուսանողները, և՛ դասախոսները, ակնհայտ է, հանդիպել են տարբեր խնդիրների, որոնց վերհանումը մասնաճյուղի ռազմավարական առաջնահերթ նպատակներից է:

Առաջնորդվելով մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան գործողությունների կատարաման անհրաժեշտությամբ (6.1.1, «Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից) մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինն առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, հարցման միջոցով ուսումնասիրել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը:

Հարցման նպատակն էր բացահայտել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,

2. հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ղեկավարի աջակցությունից,
3. կատարած աշխատանքից,
4. հետազոտական աշխատանքի կազմակերպումից,
5. հետազոտական աշխատանքի գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով: Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած 15 կուրսերի 187 ուսանողներից հղումն ուղարկվել է 179 ուսանողի, իսկ հարցմանը պատասխանել են **80-ը** (**45%**), որը մասնակցության շատ ցածր ցուցանիշ է և վկայում է ուսանողների, միգուցե, անտարբերության, կամ ներմասնաճյուղային գործընթացների նկատմամբ անտարբերության մասին: Մասնավորապես, մասնակցության ամենացածր ցուցանիշ գրանցվել է բնական գիտությունների ֆակուլտետում. հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք կատարած 44 ուսանողների միայն 27%-ը (12), կիրառական արվեստի ֆակուլտետից մասնակցել է հետազոտական աշխատանք կատարած 27 ուսանողների միայն 48%-ը (13), հումանիտար գիտությունների ֆակուլտետի 70 ուսանողների 54%-ը (38), տնտեսագիտության ֆակուլտետի 38 ուսանողների 45%-ը (17):

Նշենք, որ հետազոտական աշխատանքներ կատարվել են 15 կուրսերում 26 դասընթացներից:

Հարցման արդյունքները հավաքագրվել և վերլուծվել են մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

Այժմ ուշադրության արժանի առանձին գործընթացների վերաբերյալ ներկայացնենք հարցման ամփոփ արդյունքները և դրանց վերլուծությունը:

1. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի բովանդակությունից և ռեսուրսներից

Ուշադրության արժանի էր այն փաստը, թե ըստ ուսանողների ինչ է հետազոտական աշխատանքը: Պատասխանելով այդ հարցին ուսանողները բավականին բովանդակալից ներկայացրել են իրենց տեսակետները և նկատառումները:

Հարցմանը մասնակցած ուսանողների **54%-ի** կարծիքով հետազոտական աշխատանքը ուսանողների մոտ հետազոտելու, ստեղծագործելու, մտածելու և արտահայտվելու կարողությունները զարգացնելու միջոց է, **44%-ի** կարծիքով այն տվյալների հավաքագրման և դրանց վերլուծման կարողությունները զարգացնելու միջոց է, **8%-ը** հետազոտական աշխատանքը բնութագրել է որպես ինքնուրույն աշխատանք, իսկ **4%-ը** այն համարում է կուրսային աշխատանք:

Ընդհանուր առմամբ, գրեթե բոլոր կարծիքներն արտահայտում են հետազոտական աշխատանքի գաղափարական կողմը: Այսինքն, ըստ ուսանողների, իրականացվող հետազոտական աշխատանքները նպատակ ունեն ուսանողների մոտ զարգացնելու թեման

խորությամբ ուսումնասիրելու, անհրաժեշտ տվյալներ դուրս բերելու, դրանք համեմատելու և գնահատելու, սեփական եզրակացություն մշակելու և ներկայացնելու կարողությունները:

Ըստ հարցման արդյունքների ուսանողների **97.5%-ը** կատարել և ներկայացրել է իր հետազոտական աշխատանքը: 2 ուսանող նշել են, որ հետազոտական աշխատանք չեն ներկայացրել, իսկ չներկայացնելու պատճառների մասին որևէ հիմնավոր պատճառ չեն ներկայացրել:



Հարցումը նպատակ ուներ պարզելու, թե ինչպե՞ս են ուսանողները մասնակցել հետազոտական աշխատանքի թեմաների առաջադրմանը: Պետք է փաստել, որ պատասխանները բավականին զոհացնող են. ըստ հարցման արդյունքների հարցմանը մասնակցած ուսանողների **71%-ը** (55 ուսանող) փաստել է, որ մասնակցել է հետազոտական աշխատանքի թեմաների առաջադրմանը՝ արտահայտելով իր ցանկությունները: Այս արդյունքը վկայում է, որ մասնաճյուղում գործում է ուսանողակենտրոն միջավայր:



Ակտիվ մասնակցելով թեմայի առաջադրմանը և արտահայտելով նախասիրությունները ուսանողներն իրենց համար ապահովում են հետաքրքիր և նպատակային աշխատանք: Սա, իհարկե խոսում է ուսանող-դասախոս փոխհամագործակցության մասին, և նպատակ ունի ուսանողների մոտ բարձրացնելու մասնագիտական ոլորտում գիտության արդի ուղղություններից և նվաճումներից տեղեկացվածության մակարդակը, կողմնորոշվելու ապագայի նկատմամբ իրենց նախասիրություններում և այլն:

Հարցմանը մասնակցած ուսանողների **22%**-ը փաստում է, որ հետազոտական աշխատանքի թեման իր նախասիրությունների շրջանակում էր, իսկ **48%**-ն այն համարել է ուղղակի հետաքրքիր թեմա, իսկ ահա **9%**-ը (ընդամենը 7 ուսանող) իր թեման համարել է անհետաքրքիր, ինչը կարող է կախված լինել թեմայից անտեղյակության, թեմայի բարդության կամ ոչ արդիականության հետ և այլն: Ամեն դեպքում, թեմաների ընտրության և առաջադրման գործում դասախոսները բավականին աշխատանք ունեն կատարելու, որպեսզի թեմատիկան ուսանողների համար լինի և՛ հետքրքիր, և՛ արդիական, և՛ հասանելի:



Հարցման մասնակիցների մոտ **95%-ի** կարծիքով աշխատանքի թեմաները լիովին փոխկապակցված էին դասընթացի հետ, հիմնականում դասընթացի ընթացքում ուսումնասիրված թեմաներն էին, կամ նրան մոտ թեմաներ:

Համադրելով հետազոտական աշխատանքի վերաբերյալ ուսանողների ձևակերպումները և կատարած աշխատանքի բնույթի վերաբերյալ կարծիքները կարելի է եզրակացնել, որ դրանք համընկնում են: Մասնավորապես, նրանց գրեթե **58,4%-ի** կարծիքով իրականացված աշխատանքը ամբողջությամբ հետազոտական էր, իսկ **31,2%-ի** կարծիքով աշխատանքն ավելի շուտ ինքնուրույն աշխատանք էր: Իսկ ահա մասնակիցների մոտ 10%-ը դժվարացել է ներկայացնել իր աշխատանքի բնույթը:

Ուսանողների **92%-ը** նշել է, որ հետազոտական աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ նյութերի և աղբյուրների ձեռք բերման հիմնական կիրառվող միջոցը եղել է համացանցը, այսինքն ուսանողները հիմնականում օգտվել են էլեկտրոնային գրադարաններից և պաշտոնական տվյալներ պարունակող կայքէջերից: Անհրաժեշտ նյութեր տրամադրվել են նաև դասախոսների կողմից՝ **36%**:

Իսկ ահա նրանց միայն **19%**-ն է օգտվել մասնաճյուղի գրադարանային պաշարներից: Հաշվի առնելով հետազոտական աշխատանքի նեղ մասնագիտական լինելու փաստը, նաև աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տվյալների լայն շրջանակը, նաև հետազոտական տարրերի փոփոխությունն ըստ ժամանակի, մասնաճյուղի գրադարանային պաշարներից ուսանողների օգտվելու ցածր ցուցանիշը կարելի է համարել արդարացված:

Ուսումնասիրելով հետազոտական աշխատանքների կատարման արդյունքում իրենց ձեռքբերումների վերաբերյալ ուսանողների կարծիքները, կարելի է համարել, որ մասնաճյուղը կատարել է իր առջև դրված խնդիրը՝ հասնելով անհրաժեշտ արդյունքի: Հարցմանը մասնակցած ուսանողների 55-ից 70%-ը նշել է, որ հետազոտական աշխատանքն իրենց տվել է ինքնուրույն աշխատելու ունակություններ, դատողություններ, եզրակացություններ և վերլուծություններ կատարելու կարողություններ, նոր գիտելիքներ և այլն:



Ակնհայտ է, սրանք առաջին ձեռքբերումներն են և նաև նկատելի խնդիրները, և որոնք պետք է մշտապես բարելավել:

Ներկայացնենք, թե առաջադրված աշխատանքներն իրականացման տեսանկյունից ուսանողների համար ինչպիսի բարդություն են ունեցել:



Ուսանողների պատասխաններից հետևում է, որ թեմաները հիմնականում եղել են մատչելի և հասանելի, մասնավորապես նրանց **60%**-ի մոտ հետազոտական աշխատանքի կատարումը բարդություն չի ներկայացրել, **28%**-ը նշել է, որ ստիպված է եղել շատ նոր բաներ սովորել, ինչը հետազոտական աշխատանքի կարևոր նպատակներից մեկն է, և թեմաների ճիշտ ընտրման և ուսանողների հետ դասախոսների արդյունավետ գործունեության արդյունքում պետք է հասնել այս ցուցանիշի բարելավմանը: Ուսանողներից **5%**-ի մոտ եղել են դժվարություններ, սակայն, ինչպես իրենք են



փաստել, կարողացել են հաղթահարել և գերազանց կատարել աշխատանքը: Ընդհանուր առմամբ աշխատանքը լավ է ստացվել մոտ **93%**-ի մոտ:

Ուսանողների **56%**-ը նշել է, որ հնարավորության դեպքում կցանկանար շարունակել աշխատել իր թեմայի ուղղությամբ:

Ամփոփելով հարցման այս բաժնի արդյունքները կարելի է համարել, որ ուսանողները բավարարված են հետազոտական աշխատանքի իրականացման համար տրամադրված ռեսուրսներից և նրա բովանդակությունից:

Արդյունքները վկայում են, որ հետազոտական աշխատանք կատարած և հարցմանը մասնակցած ուսանողների գերակշիռ մասը ցուցաբերել է ակտիվություն և հետաքրքրվածություն աշխատանքի կազմակերպման և իրականացման գործընթացում:

Ըստ ուսանողների հանձնարարված թեմաները հիմնականում եղել են արդիական, հետաքրքիր և մեծամասամբ պարունակել են հետազոտական տարրեր, իսկ նրանց ակտիվ և խելամիտ պատասխանները խոսում են այդ գործընթացում նրանց ներգրավվածության մասին:

Աշխատանքները եղել են ուսանողների կողմից հաղթահարելի, արդյունավետ ապահովել են առաջադրված նպատակները՝ այն է տալ նոր գիտելիքներ, զարգացնել տվյալներ հավաքագրելու, վերլուծելու, մտածելու, դատողություններ անելու կարողությունները:

Ընդհանուր առմամբ հետազոտական աշխատանքի կազմակերպումը կարելի է համարել ստացված:

Ուսանողների առաջարկներն ամփոփելով այս բաժնում պետք է նշել հետևյալ խնդիրները.

1. հետազոտական աշխատանքների կազմակերպման ժամանակ ամբիոններում ուշադրություն դարձնել թեմաների արդիական և հետազոտական տարրեր պարունակելուն,

2. գրադարանային պաշարները հնարավորինս լրացնել ժամանակակից մասնագիտական և գիտական գրականությամբ:

2. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից

Ուսանողի հաջողության առաջնահերթ գրավականներից են նրա ինքնակրթությունը և դասախոսների հետ հաջող համագործակցությունը: Մասնավորապես, հետազոտական աշխատանքն ուսանողից պահանջում է ինքնուրույն աշխատելու որակներ, իսկ աշխատանքի ղեկավարից սրտացավ և հետևողական աշխատանք:

Հետևաբար, հարցումը նպատակ ուներ պարզելու ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից:

ՄԿՈՒԱ բաժինը, հարցման միջոցով ուսումնասիրության շրջանակներում փորձել է պարզել, թե ուսանողները որքանով են բավարարված դասախոսի աջակցությունից.

1. թեմայի ընտրության գործում,
2. հետազոտական մեթոդների ընտրության գործում,
3. վերլուծությունների կատարման ժամանակ,
4. գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում,

5. աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ:

Ուսանողներն առաջադրված այդ հարցերին պատասխանել են իրենց բավարարվածությունը գնահատելով 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր նիշն է, 2-ը՝ ամենացածր, իսկ 0-ն՝ դժվարանում են պատասխանել:

Հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքում վերը նշված գործընթացների համար դասախոսների կողմից ուսանողներին աջակցության միջին միավորները կազմել են **3.7-3.9** միավոր:



Այս միավորները որպես միջին միավորներ ցածր են, բայց ավելի բովանդակալից են դառնում, երբ նրանց դիտարկում ենք ըստ ֆակուլտետների:

Բնական գիտությունների ֆակուլտետում հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից ուսանողների բավարավածության միջին գնահատականները կազմել են **3.2-3.6** միավոր. բավականին ցածր արդյունքներ:



Ուշադրություն. Դիագրամում արժեքները տրված են ըստ գործընթացների վերևում ներկայացված համարակալման:

Ֆակուլտետում հետազոտական աշխատանքներ իրականացվել են 3 դասընթացներից և ինչպես վկայում են ներկայացված տվյալները, ուսանողները հիմնականում ցածր են գնահատել թեմաների և նյութերի ընտրության գործում ղեկավարների աջակցությունը:

Կիրառական արվեստի ֆակուլտետում միջին գնահատականները կազմել են **3.2-3.5** միավոր, հետազոտական աշխատանքներ իրականացվել են 4 դասընթացներից: Այս դեպքում հատկապես ցածր է գնահատվել (3.2 միավոր) ղեկավարի աջակցությունը հետազոտական մեթոդների ընտրության գործում:



Հումանիտար գիտությունների ֆակուլտետում միջին գնահատականները տատանվել են **3.8-4.3** միջակայքում և ի տարբերություն նախորդ թվարկված ֆակուլտետների այստեղ

հետազոտական աշխատանքներ իրականացվել են 10 դասընթացներից, այս արդյունքներն իրենց մեջ պարունակում են ավելի շատ թվով ուսանողների կարծիքներ և համեմատաբար բարձր են: Այս դեպքում ֆակուլտետի արդյունքների մեջ ցածր է գնահատվել աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ ղեկավարի աջակցությունը:



Տնտեսագիտության ֆակուլտետում միջին գնահատականները տատանվել են **3.7-4.1** միջակայքում: Հետազոտական աշխատանքներ իրականացվել են 9 դասընթացներից: Այս դեպքում համեմատաբար ցածր է գնահատվել ղեկավարի աջակցությունը գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում:



Ամփոփելով հարցերի 2-րդ բաժնի արդյունքները կարող ենք նշել, որ որպես միջին միավորներ, ակնհայտ է, որ բերված արդյունքները զոհացուցիչ չեն և ուսանողների անբավարարվածության պատճառները պարզաբանելու համար լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն: Խնդիրն առավելապես ընդգծված է բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետներում:

Ներկայացված արդյունքներից տպավորորություն է, որ ուսանողների ակնկալիքները ղեկավարների աջակցությունից եղել են ավելին: Խնդիրն այլ կողմից նայելու դեպքում կարելի է նաև եզրակացնել, որ ուսանողները տեղեկացված չեն եղել ղեկավարի պարտականություններից, չեն պատկերացրել ուսանողի հետ նրա գործունեության և աջակցության շրջանակները: Նրանք պետք է գիտակցեին, որ հետազոտական աշխատանքի իրականացման հիմնական բեռնվածությունը ուսանողինն է, իսկ խորհրդատուն՝ ղեկավարը: Անհրաժեշտության դեպքում կամ կրթական ծրագրի ղեկավարը, կամ հենց հետազոտական աշխատանքի ղեկավարը պետք է ուսանողների հետ անցկացնի խորհրդատվական քննարկումներ:

Ցանկացած պարագայում այս գործընթացում նկատվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ղեկավարների կողմից ոչ անհրաժեշտ չափով աջակցություն,
- ✓ ուսանողներին աշխատանքի իրականացման ճանապարհի ոչ ճիշտ ներկայացում:

Այս խնդիրներին պետք է անպայման անդրադառնան համապատասխան շահագրգիռ կլառույցները. ամբիոն, կրթական ծրագրի ղեկավար, կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին, մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին և այլն:

3. Ուսանողի բավարարվածությունն իր կատարած աշխատանքից

Յուրաքանչյուր աշխատանք կարևորվում է ոչ միայն վերջնարդյունքով, այլ նաև թե ինչպիսի՞ ջանքեր են ներդրվել դրա իրականացման համար, և որքանո՞վ մարդը բավարարված է իր կատարած աշխատանքից և ձեռքբերումներից:

Հետազոտական աշխատանքների իրականացումը նպատակ ունի ուսանողների մոտ զարգացնելու կատարած աշխատանքը գնահատելու և արժեվորելու կարողություններ, զարգացնելու սեփական հնարավորությունները դրսևորելու, խնդիրները տեսնելու և լուծելու ունակությունները և այլն:

Հարցման 3-րդ բաժնի հարցերով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունն իրենց կատարած աշխատանքից: Գնահատման 5 միավորանոց սանդղակով փորձել ենք պարզել, թե որքանո՞վ է ուսանողների մոտ ստացվել ինքուրույն.

1. պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը,
2. ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները,
3. գնահատել թեմայի արդիականությունը և նշանակությունը,
4. հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը,
5. օգտվել անհրաժեշտ գրականությունից,
6. ներկայացնել ձեռք բերված արդյունքները,
7. ձևակերպել եզրակացությունը,
8. ներկայացնել կատարած աշխատանքը:

Նշենք, որ ըստ նշված հարցերի մասնաճյուղում հարցմանը մասնակցած ուսանողների կողմից տրված գնահատականների միջինը կազմել է **3.9-4.1** միավոր, որը նույնպես բարձր արդյունք չէ:



Այս գնահատականների ռեալ բովանդակությունն ավելի ընկալելի և խնդիրներն ավելի տեսանելի կլինեն ըստ ֆակուլտետների դիտարկման արդյունքում:

Ստորև ներկայացնում ենք բոլոր ֆակուլտետների ամփոփ արդյունքները.









Ամփոփելով հարցաշարի երրորդ բաժնում ներառված հարցերին ուսանողների տված պատասխանները կարելի է փաստել, որ ուսանողները բավականին օբյեկտիվ և անաչառ են գնահատել իրենց հետազոտական գործունեությունը: Եթե հաշվի առնենք, որ ինքնագնահատական տալը բավականին դժվար է, ապա հաճելի է նշել, որ դա մեր ուսանողների մոտ ստացվել է, և այն եղել է նրանց կարողությունների սահմաններում: Նրանց ինքնագնահատականներն արտացոլում են հետազոտական աշխատանքի կատարման ժամանակ ուսանողների դժվարությունների, հանդիպած խնդիրների մասին:

Արդյունքները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր ֆակուլտետների (առավել ընդգծված բնական գիտությունների ֆակուլտետի) ուսանողների մոտ դժվար է ստացվել հետազոտական աշխատանքի նպատակն ու խնդիրները ձևակերպելը: Օրինակ, հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողները համեմատաբար դժվարացել են աշխատանքի պլանավորման, թեմայի արդիականության և նշանակության հիմնավորման գործում, կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները խանդիպել են խնդիրների գրականությունից օգտվելու ժամանակ, իսկ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները նշվածներից բացի նաև աշխատանքի ավարտին եզրակացությունների ձևակերպման ժամանակ:

4. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի կազմակերպումից

Հետազոտական բաղադրիչով դասընթացների գաղափարի նորամուծությունը նոր խնդիրներ է առաջադրել ոչ միայն ուսանողների համար, նաև ուսումնական գործընթացի կազմակերպիչների համար: Նրանք պետք է ապահովեն անհրաժեշտ պայմաններ ու միջավայր ուսանողների հետազոտական գործունեության արդյունավետ և հարթ կազմակերպման համար:

Այդ գործընթացում ցանկացած թերություն և բարդ իրավիճակ, ակնհայտ է, կարող է նվազեցնել ուսանողի մոտիվացիան: Այդ պատճառով բոլոր պատասխանատուներն աշխատել են նվիրումով և կազմակերպել ու աջակցել են ուսանողներին:

Այս հարցման շրջանակներում փորձել ենք պարզել, թե.

- ✓ որքանո՞վ էր ճիշտ ընտրված աշխատանքը կատարելու համար հատկացված ժամանակը,
- ✓ որքանո՞վ էր արդյունավետ աշխատանքի կազմակերպման ձևը,
- ✓ ուսանողներին ծանոթացրել են արդյո՞ք աշխատանքի մեթոդաբանությանը:



Ներկայացված արդյունքները փաստում են, որ տրված հետազոտական աշխատանքների կատարման համար հատկացված ժամանակահատվածը հարցմանը մասնակցած ուսանողների **47%**-ին բավարարել է, **32%**-ի համար այն բավարարել է ծանրաբեռնված աշխատանքի շնորհիվ: Հարցմանը մասնակցած ուսանողների միայն **6%**-ն է վկայել, որ աշխատանքի ծավալուն լինելու պատճառով ժամանակի խնդիր է ունեցել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մասնաճյուղի դասախոսները հետազոտական աշխատանքների կատարման համար գերադասել են ուսանողների անհատական աշխատելու սկզբունքը: Հարցմանը մասնակցած ուսանողների **86%**-ը իր հետազոտական աշխատանքը կատարել է անհատապես, **14%**-ը՝ խմբային և անհատական աշխատանքների զուգակցումով, իսկ 6%-ը՝ միայն խմբային աշխատանքով:



Հարկ է նշել, որ ուսանողների 85%-ի համար աշխատանքի կազմակերպման ընտրված ձևը եղել է արդյունավետ:

Իսկ ահա հարցման մասնակիցների **77%**-ը փաստել է, որ իրենց ծանոթացրել են հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը, իսկ **4%**-ը նշել է, որ իրենց այն չի ներկայացվել:



<u>Ամփոփելով չորրորդ բաժնի արդյունքները</u> գրանցում ենք, որ հետազոտական աշխատանքի համար հատկացված ժամանակահատվածը բավարար է, աշխատանքի իրականացման համար ընտրված ձևերն արդյունավետ են և կիրառելի:

Այստեղ ակնհայտ աչքի զարնող խնդիրը ուսանողների ոչ լիարժեք տեղեկացվածությունն է հետազոտական աշխատանքի կատարման մեթոդաբանությունից:

5. Ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի գնահատումից

Ուսանողի համար ցանկացած աշխատանքի ավարտը ամրագրվում է գնահատականով, որն արտահայտում է կոնկրետ նպատակի հասնելու համար նրա թափած ջանքերն ու ձեռքբերումները: Գնահատականը կարևոր է ոչ միայն ուսանողի աշխատանքի արդյունքը թվային մեծությամբ արտահայտելու համար, օբյեկտիվ և ճիշտ գնահատումը ուսանողի մոտիվացիայի բարձրացման կարևորագույն պայմաններից է:

Աշխատանքի ճիշտ պլանավորման և կատարման համար անհրաժեշտ է, որ ուսանողները նախապես տեղեկացված լինեն իրենց աշխատանքի գնահատման չափանիշներից: Մասնաճյուղում հետազոտական բաղադրիչը կրթական ծրագրերում ներառելուց հետո ուսանողներին ներկայացվել է նաև «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգը (ԵՊՀ ԳԽ 12.03.2020թ., որոշում թիվ 11/2): Իհարկե, գնահատման չափանիշները մշտապես հրապարակվում և ուսանողին հասանելի են դառնում բոլոր հարթակներում, սակայն դրանք ավելի ընկալելի են դառնում, երբ ներկայացվում են դասախոսի կողմից:

Հաշվի առնելով հետազոտական աշխատանքի կատարման և նրա գնահատման չափանիշների հրապարակայնությունը մեզ համար կարևորվել է ուսանողների տեղեկացվածության խնդիրը, հետևաբար համապատասխան հարցերի միջոցով փորձել ենք պարզել, թե որքանո՞վ և որտեղի՞ց են ուսանողները տեղեկացել հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշներին:

Նշենք, որ հարցման մասնակիցների գերակշիռ 79%-ը վկայել է, որ գնահատման չափանիշների մասին տեղեկացել է անմիջապես դասախոսից: Ուսանողների 17 %-ը գնահատման չափանիշներից տեղեկացել է այլ ճանապարհներով, իսկ 4%-ը առհասարակ

տեղեկացված չի եղել: Սա իհարկե կարելի է բացատրել ոչ միայն դասախոսի թերացմամբ, այլ նաև ուսանողների անտարբերության:



Ուսանողների **54%**-ի կարծիքով գնահատման չափանիշները ճիշտ են ընտրված, **41%**-ի կարծիքով՝ մասամբ են ճիշտ:

Չնայած, որ ըստ հարցման արդյունքների ուսանողների ճնշող մեծամասնությունը՝ **84%-ը**, բավարարված է իր ստացած գնահատականից, սակայն **12%-ի** կարծիքով իր ստացած գնահատականը չի համապատասխանում կատարված աշխատանքին: Բացի երկկողմ սուբյեկտիվության առկայությունից նման կարծիքի համար պատճառ կարող է հանդիսանալ նաև ուսանողների ոչ լիարժեք տեղեկացվածությունը գնահատման չափանիշներից:



Աշխատանքների գնահատումն իրականացվել է ըստ ամրագրված չափանիշների: Դրանցում կարևորվում են ուսանողի ինքնուրույնությունը, ներկայացրած վերլուծությունները, արդյունքների հիմնավորվածությունը, տվյալների մշակումը և այլն:

Հերթական հարցով փորձել ենք պարզել, թե ըստ ուսանողների իրենց աշխատանքում հատկապես ի՞նչ է բարձր գնահատվել: Ներկայացված դիագրամի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ուսանողների կողմից ներկայացվել են բավականին լավ կատարված աշխատանքներ, և հարցմանը մասնակցած ուսանողների **50-ից 60%**-ը վկայել է, որ իր աշխատանքը գնահատելուց հաշվի են առնվել բոլոր հիմնական տեսանկյունները:



<u>Ամփոփելով հարցման 5-րդ բաժնի արդյունքները</u> կարել է եզրակացնել, որ հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները հիմնականում ճիշտ են ընտրված և գնահատականները նշանակվել են այդ չափանիշներին համապատասխան:

Այստեղ պետք է ամբիոնների և հետազոտական աշխատանքների ղեկավարների ուշադրությունը հրավիրել առկա միակ խնդրի վրա. դա ուսանողների ոչ լիարժեք տեղեկացվածությունն է գնահատման չափանիշներից: Անհրաժեշտ է ուսանողների համար կազմակերպել գնահատման չափանիշների քննարկում՝ բարձրացնելով նրանց տեղեկացվածությունը և ընկալումը, դրանով ապահովելով նաև գնահատման թափանցիկություն:

6. Ամփոփում

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում ուսանողների մոտ առաջացած խնդիրները հիմնականում կապված են նախ, համավարակով պայմանավորված սահմանափակումներով և երկրորդ՝ անհրաժեշտ գրականության բացակայությամբ:

Ուշադրության են արժանի բաց հարցերին ուսանողների տված պատասխանները, որտեղ նրանք արտահայտել են իրենց կարծիքները կատարած հետազոտական աշխատանքների կիրառելիության վերաբերյալ: Այդ հարցին պատասխանած 31 ուսանողներից 2-ը (հարցմանը մասնակցած ուսանողների 37%-ը) փաստել է, որ իր հետազոտության և ուսումնասիրության արդյունքները, կատարած վերլուծությունները և ձեռք բերած արդյունքները կիրառելի են, մասնավորապես հենց այն կազմակերպություններում ու դպրոցներում, որոնց օրինակի կամ տվյալների վրա իրականացվել են վերլուծությունները: Նրանք գտնում են, որ հետաքրքրված կամ շահագրգիռ անհատների կամ կազմակերպությունների ցանկության դեպքում ձեռք բերված արդյունքները կարող են ներդրվել Տավուշի մարզի զբոսաշրջության ոլորտում, ՊԵԿ գործունեության մեջ (տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներ), արդյունաբերական ոլորտում (կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողներ), դպրոցներում, մասնաճյուղում՝ ուսանողների կողմից (հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողներ),

համայնքապետարաններում և տարածաշրջանային զարգացման ծրագրեր մշակողների կողմից (բնական գիտությունների ֆակուլտետի ուսանողներ)։

Հետազոտական աշխատանքների բարելավման նպատակով ուսանողների կողմից հնչեցված հիմնական առաջարկներն են.

1. հնարավորինս նվազեցնել մեկ կիսամյակում հետազոտական աշխատանքների քանակը՝ որակի ապահովման համար,
2. հանձնարարել առավել արդիական և ավելի շատ գործնական աշխատանքներ ներառող թեմաներ,
3. վերանայել գնահատման չափանիշները և դրանք լիարժեք կիրառել գնահատման ժամանակ,
4. աշխատանքների գնահատմանը մասնակից դարձնել մի քանի դասախոսների,
5. տվյալներ ձեռք բերելու համար աջակցել անհրաժեշտ կազմակերպություններ և դպրոցներ ուսանողների այցին։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին